**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

02.02.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ղուկասյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Կ. Բարսեղյան |
| | Գ. Խաչատրյան |
| | Ս. Մատինյան |
| | Աշ. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին**

---------------------------------------------------------------------------------------------------

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն՝ գնման ընթացակարգի մասնակցի՝ «Տիգրան Սարգսյան» Ա/Ձ հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

1.2 «Սպասարդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

Մասնակցի կողմից ներկայացված չէ հրավերի հավելված N 2.1-ով պահանջվող ավտոլվացման կետի (կետերի) հասցեն (հասցեները):

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Սպասարդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 03.02.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկում ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել ոչ ուշ քան 2026 թվականի փետրվարի 4-ին ժամը 10:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------ Տ. Ղուկասյան

Անդամ՝ ------------------------------------------ Կ. Բարսեղյան

------------------------------------------ Գ. Խաչատրյան

------------------------------------------ Ս. Մատինյան

------------------------------------------ Աշ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------ Գ. Հակոբյան